

**«ԱՄԿԵ ԳՐՈՒՊ»**  
**բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն)**  
**խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ)**  
**ՈՐՈՇՈՒՄ թիվ 9**

(Կազմված է «26» հուլիսի 2022 թ.-ին և բաղկացած է 1 (մեկ) թերթից)

Խորհրդի անցկացման վայր՝ ՀՀ, ք. Չարենցավան, Երևանյան 2  
Խորհրդի անցկացման տարի, ամիս, ամսաթիվ՝ 2022 թվականի հուլիսի 26  
Խորհրդի սկիզբ՝ ժամը 11:00

Խորհրդի նիստին ներկա էին՝

- 1) Միխայիլ Հարությունյանը՝ խորհրդի նախագահ
- 2) Խաչատուր Անտոնյանը՝ խորհրդի անդամ
- 3) Վազգեն Նիկոլյանը՝ խորհրդի անդամ
- 4) Դավիթ Յավրույանը՝ խորհրդի անդամ
- 5) Նազիկ Ավագյանը՝ խորհրդի քարտուղար

ՀՀ օրենսդրությամբ և «ԱՄԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲ ընկերության կանոնադրության համաձայն՝ քվորումն ապահովված էր, Խորհրդի նիստն իրավասու էր:

**ՕՐԱԿԱՐԳ՝**

Ընկերության 08.06.2022 թվականի բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի կողմից բաշխված շահույթից շահութաբաժիններ ստանալու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակի կազմում:

Զեկուցող՝ Խաչատուր Անտոնյան

**ՔՆՆԱՐԿՎԵՑ՝**

Քննարկվող հարցի վերաբերյալ Զեկուցողը առաջարկեց ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 4-րդ մասի կարգավորումներով Ընկերության 08.06.2022 թվականի բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի կողմից բաշխված շահույթից շահութաբաժիններ ստանալու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմել Ընկերության կողմից 08.06.2022 թվականի բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ ընդգրկված բաժնետերերի կազմով:

Հարցը դրվեց քվեարկության՝

Միխայիլ Հարությունյանը՝ խորհրդի նախագահ	ԿՈՂՄ
Խաչատուր Անտոնյանը՝ խորհրդի անդամ	ԿՈՂՄ
Վազգեն Նիկոլյանը՝ խորհրդի անդամ	ԿՈՂՄ
Դավիթ Յավրույանը՝ խորհրդի անդամ	ԿՈՂՄ

Ընդամենը՝ կողմ՝ 4, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0, չի մասնակցել՝ 0

**ՈՐՈՇՎԵՑ՝**

- 1) Կազմել Ընկերության կողմից 08.06.2022 թվականի բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի կողմից բաշխված շահութաբաժիններ ստանալու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը՝ 2022 թվականի մայիսի 13-ի դրությամբ Ընկերության բաժնետերերի ցուցակում ընդգրկված բաժնետերերի կազմով:
- 2) Որպես ցուցակ ընդունել ՀՀ կենտրոնական դեպոզիտարիայի կողմից 2022 թվականի մայիսի 13-ին, ժամը 18:00-ին տրված «ԱՄԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲԸ արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ցուցակը և կցել սույն որոշմանը որպես հավելված:

Միխայիլ Հարությունյանը՝ խորհրդի նախագահ  
Խաչատուր Անտոնյանը՝ խորհրդի անդամ  
Վազգեն Նիկոլյանը՝ խորհրդի անդամ  
Դավիթ Յավրույանը՝ խորհրդի անդամ

